ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՄԻՋՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

06-ը հունվարի 2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N1

Միջնատուն համայնքի բնակիչներին պատկանող խոշոր և մանր եղջերավոր անասունների հաշվառումը անցկացնելու նպատակով կազմել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Շամոյան (ավագանու անդամ)

Անդամներ՝ Լ.Հասոյան (բնակիչ)

Միջնատուն համայնքի ղեկավար՝ Մ. Հասոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՄԻՋՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01-ը փետրվարի 2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N2

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի Ա- կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սվետա Ռզայի Քոջոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

Միջնատուն համայնքի ղեկավար՝ Մ. Հասոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՄԻՋՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

03-ը մայիսի 2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N6

Հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Միջնատուն համայնքի բնակիչներ՝ ամուսիններ Զինա Զամալի Ղոլչիյանի և Ալի Ամոյի Ղոլչյանի դիմումը իրենց թոռների Զինա Բաղրի Գոլչյանի ծնված 31.10.1995թ. և Խանում Բաղրի Գոլչյանի ծնված 02.06.1998թ. նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ, Միջնատուն համայնքի խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի 03.05.2011թ. թիվ 1 արձանագրությանը «Խնամակալության և հոգաբարձության մարմինների» կանոնադրության 2-րդ բաժնի 12 կետի 3-րդ ենթակետի, 3-րդ բաժնի 6-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ «Ընտանեկան օրենքի» 44-րդ և 53-րդ հոդվածներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Զինա Բաղրի Գոլչյանի և Խանում Բաղրի Գոլչյանի նկատմամբ խնամակալ Զինա և Ալի Ղոլչիյաններին նշանակելու դիմումը մերժել:
2. Զինա և Խանում Գոլչյանների խնամքը ժամանակավորապես թողնել պապի և տատի կողմից իրականացնելու մինչև դատական գործի ավարտը:
3. Հանձնաժողովի անդամներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն և օժանդակեն երեխաների մորը՝ Նինա Գոլչյանին անարգել տեսակցելու և շփվելու իր երեխաների հետ:

Միջնատուն համայնքի ղեկավար՝ Մ. Հասոյան